ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 113
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Ագարակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Աշտարակ համայնքի (Ագարակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Ագարակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Ագարակ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-004-0105-0110 կադաստրային ծածկագրով 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (կորիզավոր) հողեր	02-004-0105-0110 կադաստրային ծածկագրով 0.05 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված պահանջը (կցվում է):

4. Աշտարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ագարակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Ագարակ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «19» «մարտի» 2024 թ.